ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀՈՌԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԹԻՎ- 02/24

Գ. Ծաղկահովիտ

«01» հունվարի 2024թ.

Ծաղկահովիտի «Կոմունալ ծառայություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը ՀՈԱԿ-ի դեմս տնօրեն Պ. Գրիգորյանի ղեկավարելով կազմակերպության կանոնադրությամբ և օրենսդրությամբ և ՀՀ ներքին գործերի նախարարություն ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղար՝ Արա Ֆիդանյանի, որը գործում է ընկերության կանոնադրությամբ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին՝

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Ընկերությունը իր ջրամատակարարման և համակարգին միացված ցանցի միջոցով աբոնենտին մատակարարում է խմելու որոկի ջուր և իր ջրահեռացման համակարգով հեռացնում և մաքրում է կեղտաջրերը:

1.2 Աբոնենտը ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերից օգտվելու կանոնների համաձայն օգտագործում է մատակարարված ջուրը, կեղտաջրերը լցնում ջրահեռացման համակարգ պայմանագրում նշված ժամկետում ու նախատեսված կարգով վճարում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սակագներով:

2 ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 կողմերը պարտավորվում են ղեկավարվել ՀՀ օրենսդրությամբ, կանոններով և սույն պայմանագրով:

2.2 Ընկերությունը պարտավորվում է՝

ա/ ապահովել աբոնենտի ամենօրյա ջրամատակարարումը /ըստ պայմանագրով հաստատված ժամանակացույցի **120 000 /մեկ հարյուր քսան հազար / ՀՀ դրամ / մեկ տարվա համար/**

բ/ Աբոմենտից իր տնօրինության տակ գտնվող ջրահեռացման համակարգ ընդունել կոմունալ-կենցաղային և արտադրական կեղտաջրերը

գ/ պահպանել կողմերի տնօրինության տակ գտնվող ջրամատակարարման համակարգի սահմանազատման տեղում մատակարարվող ջրի որակը՝ ըստ գործող ստանդարտների պահանջներին համաձայն կեղտաջրերի հեռացումն ու մաքրումը:

2.3 Աբոնենտը պարտավորվում է՝

ա/մատակարարված ջրի և կեղտաջրի հեռացման և մաքրման վարձը վճարել վճարային փաստաթուղթը ստանալուց 10 օրվա ընթացքում:

բ/ ջրի չմատակարարման, կեղտաջրերի չհեռացման կամ դրանց ոչ պատշաճ կատարման, ինչպես նաև որակի նկատմամբ կասկածներ առաջանալու դեպքում անհապաղ տեղեկացնել ընկերությանը:

գ/ ապահովել իր տնօրինության տակ գտնվող ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի ու սարքավորումների պահպանությունը և դրանց շահագործումը:

դ/ ջրի մատակարարումից և կեղտաջրերի հեռացումից հրաժարվելու դեպքում դրա մասին տեղյակ պահել ընկերությանը:

ե/ Չգերազանցել պայմանագրով սահմանված ջրաքանակը և ջրահեռացման համակարգ կեղտաջրերի քանակն ու թույլատրելի սահմանված նորմաները:

3. ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Ջրաչափի բացակայության դեպքում մատակարարված ջրի շարժման 1,5 մ/վրկ արագության և ջրամատակարարման փաստացի տևողության պայմանից հաշված վերջին փոխադարձ հաշվարկների օրվանից մինչև խախտման վերացումը

3.2 մատակարարված ջրի, կոյուղի բաց թողնված կեղտաջրերի քանակների հաշվառման ժամանակահատված է համարվում հաշվարկային ամիսը յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը ընկերությունը և աբոնենտի պատասխանատու անձինք կազմում են փոխադարձ հաշվարկների ակտ ջրաչափի համար կողմերից մեկի չներկայանալու դեպքում կազմվում է միակողմանի ակտ և գրավոր ներկայացվում մյուսին:

3.3 Աբոնենտից ջրահեռացման համակարգ լցվող կեղտաջրերի քանակը, ըստ կանոնների, հավասար է մատակարարված ջրի քանակին: Դրա չհամապատասխանելու դեպքում քանակը որոշվում է կանոնով սահմանված հաշվարկներով:

4.ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Աբոնենտին մատակարարված ջրի և կեղտաջրերի հեռացման ու մաքրման վարձի վճարումը կատարվում է պայմանագրում նշված սակագներով:

Վարձավճարների չափը ընդունված և հաստատված է Ծաղկահովիտ համայնքի ավագնու տեղական տուրքեր և վճարների 2024թ. դրույքաչափերը հաստատելու մասին 26.01.2024թ. թիվ 06-Ն որշմամբ

Վարձավճարը մուծվում է **Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ Ծաղկահովիտի Մ/Ճ Հ/Հ 220425140328000**
Պայմանագրի կնքման պահից գործում են հետևյալ սակագները՝

Իրավաբանական անձանց համար՝

Հաշվիչի բացակայության դեպքում շենք մտնող խողովակի մակերեսով՝ ամսական վճարի չափը՝

1,0 դյույմի դեպքում – կազմում է <u>10 000 ՀՀ դրամ</u>

Մեկ խորոնարդ մետր հեռացվող կեղտաջրի համար դրամ

4.2 Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոփոխված սակագների կիրառումը պարտադիր է կողմերի համար:

ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի պարտավորությունները չկատարելու դեպքում, չկատարած կողմը պարտավոր է կողմին հատուցել պատճառած վնասը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.2 Ջրի չմատակարարման, կեղտաջրերի չհեռացման կամ դրանց ոչ պատշաճ կատարման դեպքում բացառությամբ կանոնների 80-րդ և 81-րդ կետերում նշված դեպքերի, ընկերությունն աբոնենտին չմատակարարած ջրի և ջրհեռացված կեղտաջրերի փաստացի քանակների համար վճարում է տույժ սակագների կրկնապատիկի չափով:

5.3 Հաշվարկային ժամկետում պայմանագրով նախատեսված ջրաքանակը գերածախսելու , ինչպես ջրահեռացման , համակարգ ավելի բաց թողնված կեղտաջրերի համար աբոնենտը վճարում է տույժ գերածախսի և ավելի բաց թողնված կեղտաջրերի սակագնի տասնապատիկի չափով:

5.4 Աբոնենտի կողմից ընկերության ջրահեռացման համակարգ լցվող կեղտաջրերի կեղտոտվածության աստիճանը չպետք է գերազանցի ՀՀ բնապահպահության նախարարության սահմանված նորմերը:

5.5 Սույն պայմանագրի կատարման ընթացքում կողմերի միջև ծագած վեճերը կարող են լուծել բանակցությունների միջոցով, որը չի սահմանափակում կողմերի վեճերը դատական կարգով լուծելու իրավունքը:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրվելու պահից և տարածվում է 2024թ. հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

6.2 Պայմանագրի գործողության ժամկետը մատակարարվող ջրի և ջրհեռացման համակարգ լցվող կեղտաքանակների փոփոխման դեպքում պայմանագիրը ենթակա է փոփոխման:

6.3 Պայմանագրի փոփոխումը և լուծումը կատարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պայմանագրի գործողության ժամկետի ավարտը կամ դրա լուծումը կողմերի միջև մինչև այդ պայմանագրի խախտելու համար պատասխանատվությունից:

6.4 Պայմանգիրը կնքվում է անժամկետ և կարող է լուծարվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ

6.5 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, յուրաքանչյուր կողմի համար մեկական օրինակ:

Ծաղկահովիտի «Կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ»	ՀՀ ՆԳՆ
Հասցեն՝ գ. Ծաղկահովիտ Հոկտեմբերյան 2	Հասցեն՝ ՀՀ Ք. Երևան Նալբանդյան 130
ՀՎՀՀ 05019914	ՀՎՀՀ 02882913
Բանկը՝ Ակբա Բանկ ԲԲԸ Արագածի մասնաճյուղ	Բանկը՝ ՀՀ ՖՆ գործ վարչություն
Հ/Հ 220425140328000	ՀՀ 900011042471
Հեռ. 093224795	հեռ.
Տնօրեն _____ Պ. Գրիգորյան	Գլխավոր քարտուղար՝ _____ Ա. Ֆիդանյան
	/ստորագրություն/